ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/216

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Հայրապետյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական՝ 03 Ա 060588)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/24201-18 գրությամբ «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 21.12.2018թ. թիվ 02/16.4/6316-18 գրության հիման վրա, 26.12.2018թ. թիվ 27/26-3/24201-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 21.12.2018թ. թիվ 02/16.4/6316-18 գրությունում տեղ գտած պնդումը, որ Ընկերության կողմից 07.12.2018թ. կազմակերպված «ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով (այսուհետ՝ Ընթացակարգ) ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը ոչ ամբողջովին համապատասխանելով հրավեր ներկայացնող կողմի բնութագրին՝ առաջացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքեր, Ընկերությունը համարում է անհիմն:

Օրենքը և գնումների գործընթացի կազմակերպման կարգը մասնակցին չեն պարտադրում ներկայացնել հրավերում ներառված գնման առարկա հանդիսացող ապրանքների բնութագրերի տառացիորեն համապատասխանող ապրանքներ: Դրա ապացույցն է այն հանգամանքը, որ պատվիրատուների ներկայացրած բնութագրերում մշտապես կարելի է հանդիպել «կամ համարժեք» եզրույթը (օրինակ քննարկվող հրավերի տեխնիկական բնութագրում օգտագործված՝ պրոցեսոր առնվազն Intel Core i5-8400 կամ համարժեք): Վերոգրյալից ելնելով, Ընկերությունը ներկայացրել է առաջարկ, որում ներկայացվել է այնպիսի ապրանք, որը համապատասխանում է պատվիրատուի պահանջներին իր հիմնական բնութագրերով և ոչ թե տառացիորեն և ինչպես ցույց է տալիս Ընթացակարգի արդյունքը էականորեն ավելի ցածր գին ունի (մոտ 30 տոկոսով), քան ընտրված մասնակցի կողմից առաջարկված և պատվիրատուի կողմից ներկայացված պայմաններին ենթադրաբար լրիվորեն համապատասխան ապրանքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշվում է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է այն մասնակիցը, որը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որը հանգեցրել է պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ մասնակցի մասնակցության դադարեցմանը:

Ինչպես նաև համաձայն հրավերի 7.15-րդ կետի՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում է համարվում այն հանգամանքը, երբ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը: Բայց ինչպես կարելի է տեսնել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում, Ընկերությունը որևէ կերպ չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, սահմանված կարգով մասնակցել է գնման ընթացակարգին և ներկայացրել է պահանջվող բոլոր փաստաթղթերը, որևէ պայմանագիր միակողմանի չի լուծարվել (քանի որ Ընկերությունը ընտրված մասնակից չի ճանաչվել և պայմանագիր չի կնքվել) և Ընկերության մասնակցությունը ոչ թե դադարեցվել է, այլ ընդամենը Ընկերության հայտով ներկայացված ապրանքի բնութագիրն է ճանաչվել հրավերով սահմանված բնութագրին ոչ ամբողջովին համապատասխան և Ընկերության հայտը գնահատվել է անբավարար:

Ընկերությունը գտնում է, որ իր գործողությունները չեն առաջացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքեր, քանի որ Ընկերությունն ընդամենը պատվիրատուին ներկայացրել է առաջարկ՝ ներկայացնելով հիմնական բնութագրերով համապատասխանող ապրանք, որը չի ընդունվել պատվիրատուի կողմից: Ընկերության առաջարկի չընդունվելը առաջացրել է այլ մասնակցի ընտրություն, որը համարվում է բնականոն, սակայն Ընկերության առաջարկը որևէ կերպ չի խաթարել գնումների գործընթացը, չի խախտել որևէ օրենքի դրույթ, նյութական, ֆինանսական կամ բարոյական վնաս չի հասցրել որևէ անձի, ընկերության կամ պետությանը: Վերոգրյալից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է չնախաձեռնել վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/216 ընթացակարգի շրջանակներում 28.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.11.2018թ. թիվ Ե-40/11-6411 գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի դեկտեմբերի 7-ին կազմակերպված «ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից չէր ներկայացվել Հավելված 3.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը (այսուհետ՝ Բնութագիր):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը 2018 թվականի դեկտեմբերի 13-ին ծանուցվել է ներկայացված հայտում Բնութագրի բացակայության մասին: Վերջինիս կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է Բնութագիրը, որը չի համապատասխանել «ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/216 ընթացակարգի շրջանակներում 28.12.2018թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/216 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/216 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերով սահմանված հավելված 3.1-ը:

Ընկերությանը ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից 13.12.2018թ. դրությամբ 2-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին (մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված բնութագրում առկա չէ SD card slot, 5.1 աուդիո համակարգի համար ելքերի, 802.11 bgn/ac, BT4.0 և HDMI 1.4 կոմպլեկտավորող մասերի և պարագաների վերաբերյալ հրավերով պահանջվող տեղեկատվությունը), ինչպես նաև՝ լրացված չէ «Ապրանքային նշանը» սյունակը:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/24201-18 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 21.12.2018թ. թիվ 02/16.4/6316-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով

նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-42-րդ կետերի համաձայն՝

41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 6-րդ պարբերությամբ սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր) (համաձայն՝ հավելված 3.1):***

Ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

2	Սեղանի համակարգիչներ	Պրոցեսորը՝ առնվազն Intel Core i5-8400 կամ համարժեքը, կոշտ սակավառակը՝ HDD ոչ պակաս 1000GB օպերատիվ հիշողությունը՝ RAM ոչ պակաս 8GB DDR4 կամ համարժեքը, Video Card-intel HD Graphics 630 կամ համարժեքը, DVD-RW, առնվազն չորս USB 2.0, երկու USB 3.1 Gen 1,

		RJ-45 Realtek RTL8111H Gigabit Ethernet, 802.11 bgn/ac, BT4.0, HDMI 1.4, VGA, SD card slot, 5.1 աուդիո համակարգի հա-մար ելքեր, սնուցման բլոկը՝ 290 Վտ, ստեղնաշարը գործարանային անգլերեն, ռուսերեն տառատեսակներով՝ միևնույն արտադրողից, մկնիկը լազերային՝ միևնույն արտադրողից: Նախատեսված փոփոխական միաֆազ 220Վ լարմամբ աշխատանքի համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերով սահմանված հավելված 3.1-ը:

Ընկերությանը ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը
2	Սեղանի համակարգիչներ		Intel Asus Seagate TEAMGROUP Genius	Չինաստան	CPU Intel Core i5-8400, HDD 1TB SEAGATE SATA 3 64MB 7200rmp RAM TEAM GROUP DDR4 8GB 2400Mhz Video Card-Intel HD Graphics 630 DVD-RW LG 22X Մայրական սալիկ ASUS PRIME H310M-K մուտքերը չորս USB 2.0, երկու USB 3.1 Gen1 RJ-45 Realtek RTL8111H Gigabit Ethernet, DVI-D, VGA Սնուցման բլոկը՝ 290 Վտ, 220 Վոլտ, Ստեղնաշարը Genius KB 110X USB գործարանային անգլերեն, ռուսերեն տառատեսակներով Մկնիկը Genius DX-120 Black USB

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 17:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից 13.12.2018թ. դրությամբ 2-րդ չափաբաժնի համար ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին. մասնավորապես՝ ***մասնակցի կողմից ներկայացված բնութագրում առկա չէ SD card slot, 5.1 աուդիո համակարգի համար ելքերի, 802.11 bgn/ac, BT4.0 և HDMI 1.4 կոմպլեկտավորող մասերի և պարագաների վերաբերյալ հրավերով պահանջվող տեղեկատվությունը***, ինչպես նաև՝ լրացված չէ «Ապրանքային նշանը» սյունակը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, տեխնիկական բնութագրերը (համաձայն՝ հավելված 3.1-ի):

«Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից հայտով չի ներկայացվել հավելված 3.1-ը, ուստի Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հավելված 3.1-ը, որում սակայն չի նշվել հրավերով պահանջվող առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ինչպես նաև հրավերի տեխնիկական բնութագրով 2-րդ չափաբաժնի համար պահանջվող SD card slot, 5.1 աուդիո համակարգի համար ելքերի, 802.11 bgn/ac, BT4.0 և HDMI 1.4 կոմպլեկտավորող մասերի և պարագաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Արձանագրում եմ, որ Ընկերության կողմից առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը «ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.12.2018թ. թիվ 27/26-3/24201-18 գրությամբ «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00078715) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հայրապետյան Քոմփյութերս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ